

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՍԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-1/8-1**

ք.Երևան

22.08.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Կ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատուց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

## **2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

## **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

## **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է 22 950 000 (քսաներկու միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 10-ը:

#### **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

#### **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՊՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՍՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱՖՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՎ վարչությունը:

### 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

#### ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն


ք. Երևան Բազրկանդի 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 90001144079

ՀՎՀՀ 02522157

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



#### ՎԱՃԱՌՈՂ

«ԷյՆ Գրուպ» ՍՊԸ

ք. Երևան Բաշինջաղյան 1 փ, 13/30

«Արմավիսթալ» ՍՊԸ

Հ/Հ 250001048876010

ՀՎՀՀ 01351973

ՏՆՕՐԵԼ



**ՏԵՆՏԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**  
Հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթ  
/Kaspersky Total Security for Business Node 1 year Base License /

Չ/Հ	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը
1	<p>Kaspersky Total Security for Business Node 1 year Base License</p> <p>Ընդհանուր պահանջներ</p> <p>Հակավիրուսային միջոցները պետք է ներառեն.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ծրագրային հակավիրուսային պաշտպանության համակարգեր Windows աշխատակայանների համար:</li> <li>• Ծրագրային հակավիրուսային պաշտպանության համակարգեր աշխատակայանների եւ Linux ֆայլերի սերվերների համար:</li> <li>• Ծրագրային հակավիրուսային պաշտպանության համակարգեր ֆայլային սերվերների, ձեռնարկության մակարդակի սերվերների եւ Windows տերմինալային սերվերների համար:</li> <li>• Հակավիրուսային պաշտպանություն և հակասպամ, Microsoft Exchange սերվերների համար:</li> <li>• Linux փոստի սերվերների համար հակավիրուսային պաշտպանության եւ սպամի գտման համակարգեր:</li> <li>• Linux պրոքսի սերվերների հակավիրուսային պաշտպանության ծրագրային ապահովում:</li> <li>• Կենտրոնացված կառավարման, մոնիտորինգի եւ արդիականացման համար ծրագրային ապահովում:</li> <li>• Վնասակար ծրագրային ապահովման եւ հարձակումների սիգնատուրաների թարմացվող տվյալների բազաներ:</li> <li>• Էկսպլուատացիոն փաստաթղթեր ուսերեն [եզվով]:</li> </ul> <p>Windows- ի աշխատանքային համար հակավիրուսային պաշտպանության ծրագրային ապահովման պահանջներ</p> <p>Windows- ի աշխատանքային համար հակավիրուսային պաշտպանության գործիքները պետք է գործեն հետևյալ համակարգերում աշխատող համակարգիչների վրա,</p> <p>Microsoft Windows 7 Professional / Enterprise /Ultimate x86 / x64; Microsoft Windows 7 Professional / Enterprise /Ultimate SP1 և ավելի բարձր x86 / x64; Microsoft Windows 8 Professional / Enterprise x86 / x64; Microsoft Windows 8.1 Professional / Enterprise x86 / x64; Microsoft Windows 10 Pro / Enterprise x86 / x64; Microsoft Windows Server 2012 R2 Standard x64; Microsoft Windows Server 2012 Standard / Foundation x64; Microsoft Small Business Server 2011 Standard x64; Microsoft Windows Server 2008 R2 Standard / Enterprise x64 SP1; Microsoft Windows Server 2008 Standard / Enterprise x86 / x64 SP2;</p> <p>Windows- ի աշխատանքային կայանների հակավիրուսային պաշտպանության գործիքները պետք է ապահովեն հետևյալ ֆունկցիոնալությունը.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հակավիրուսային սկանավորում իրական ժամանակում եւ ըստ պահանջի:</li> <li>• Էլիտիստիկ անալիզատոր, որը թույլ է տալիս ճանաչել եւ արգելափակել նախկինում անհայտ չարամիտ ծրագրերը:</li> <li>• Գործառույթների ավտոմատ սկիզբ, ըստ ժամանակացույցի եւ / կամ օպերացիոն համակարգի բեռնվելուց անմիջապես հետո:</li> <li>• RAR, ARJ, ZIP, CAB ֆորմատի արխիվներում գտնվող ֆայլերի հակավիրուսային սկանավորում եւ բուժում, այդ թվում՝ գաղտնաբառով պաշտպանված:</li> <li>• Անվային պաշտպանություն նոր սպառնալիքների դեմ, թույլ տալով, որ հայտը իրական ժամանակում կապ արտադրողի հատուկ ռեսուրսների հետ, ստանալով դատավճիռ՝ սկսվող ծրագրի կամ ֆայլի մասին:</li> <li>• Էլեկտրոնային նամակագրության պաշտպանությունը վնասակար ծրագրերից, մուտքի եւ ելքի տրաֆիկի ստուգում՝ հետևյալ արձանագրություններում. IMAP, SMTP, POP3, MAPI, NNTP - անկախ օգտագործվող էլիտիստիկ հակավիրուսային ապահովումից,</li> <li>• Վեբ տրաֆիկի պաշտպանություն, HTTP, FTP- ի միջոցով օգտագործողի համակարգչին հասնող օբյեկտների սկանավորում, ներառյալ էլիտիստիկական վերլուծություն, վստահելի կայքերը նշելու ունակությամբ:</li> <li>• Վեբ էջերից բեռնված բաներների եւ «pop-up»-ների արգելափակում:</li> <li>• Ֆիշինգի սայտերի ճանաչում եւ արգելափակում:</li> <li>• ICQ- ի եւ MSN- ի տրաֆիկի ստուգում, ապահովելով ինտերնետ-պեյջերների հետ աշխատելու անվտանգությունը:</li> <li>• Շրագրի աննորմալ վարքագիծը որոշելու ունակություն, շնորհիվ, այդ ծրագրի գործողությունների հաջորդականության վերլուծման: Բուժման ընթացքում վնասակար ծրագրային ապահովման գործողությունները վերադարձնելու ունակությունը, ներառյալ վնասակար ծրագրերի կողմից կորսվող ֆայլերի վերականգնումը:</li> <li>• Ծրագրերի արտոնությունները սահմանափակելու ունակություն, ինչպիսիք են՝ ռեեստրի գրելը, ֆայլերի եւ թղթապանակների հասանելիությունը: Ծրագրի ռեպուտացիայի հիման վրա սահմանափակումների մակարդակների ավտոմատ հայտնաբերում:</li> <li>• BadUSB- ի հարձակումներից պաշտպանվելու մեխանիզմների առկայություն:</li> <li>• Ներկառուցված Firewall, որը թույլ է տալիս սահմանել ցանցային կանոններ հատուկ ծրագրերի համար:</li> <li>• Պաշտպանություն ցանցային հարձակումներից օգտագործելով ներխուժման հայտնաբերման եւ կանխարգելման համակարգ (IDS / IPS) եւ ցանցային գործունեության կանոններ ամենատարածված ծրագրերի աշխատանքի համար, ցանկացած տեսակի համակարգչային ցանցերում, այդ թվում անլար.</li> <li>• Կոմպոնենտի առկայություն, որը թույլ է տալիս ստեղծել հատուկ կանոններ, որոնք արգելում են ծրագրերի տեղադրումը եւ / կամ գործարկումը: Կոմպոնենտը պետք է վերահսկի ծրագրերը, ըստ մետատվյալների, MD5 կամ sha256 checksum-ի, եւ նախանշված կատեգորիաների, տրամադրվող ծրագրային արտադրողի կողմից, ինչպես նաեւ թույլ տալ բացառություններ ավելացնել որոշ Active Directory օգտագրերին:</li> <li>• Վերահսկել օգտագործողի աշխատանքը արտաքին I / O սարքերով ըստ սարքի տեսակի եւ / կամ տվյալների BUS-ով, իրենց ID- ով վստահելի սարքերի ցանցը ստեղծելու ունակությամբ եւ արտաքին սարքեր օգտագործելու արտոնությունների տրամադրման հնարավորություն Active Directory- ից որոշակի օգտվողների համար:</li> <li>• Իրականացում անձնագիրը փորձի մոնիտորինգի եւ ինտերնետին, այդ թվում՝ բացահայտ արգելման կամ թույլտվության մատչելիության ռեեստրների որոշակի բնույթի, ինչպես նաեւ հնարավորություն է արգելափակել որոշակի տեսակի տեղեկատվության (աուդիո, վիդեո եւ այլն): Ծրագրային ապահովումը թույլ է տալիս Ձեզ մուտք գործել ժամանակի ընդմիջումներ մոնիտորինգի համար, ինչպես նաեւ հանձնել այն միայն կոնկրետ օգտագործողներին Active Directory- ից:</li> </ul>

- Ինտերնետի հետ աշխատանքի հսկում, ինչպես նաև ակնհայտ արգելք կամ թույլտվություն, կոնկրետ տիպի ռեսուրսների այցելելուն, ինչպես նաև կոնկրետ տիպի ինֆորմացիայի (աուդիո, վիդեո և այլ): Ծրագրային ապահովումը պիտի թույլ տա մուտքագրել կառավարման ժամանակային ինտերվալներ, ինչպես նաև աշխատացնել այն միայն որոշ Active Directory օգտատերերին:
- Արագացնել սկանավորման գործընթացը՝ շրջանցելով օբյեկտները, որոնց վիճակը չի փոխվել վերջին սկանինգ:
- Աշխատացնել հատուկ աշխատանք՝ հայտնաբերելու համար խոցելիությունը համակարգչում տեղադրված ծրագրերում, ինչպես նաև հայտնաբերված խոցելիների մասին զեկուցելու հնարավորություն:
- Համակարգչային ռեսուրսների օգտագործման ճկուն կառավարում, ֆայլի տարածքի սկանավորման ընդացքում, օգտատերի համար հարմարավետության ապահովման համար:
- Պաշտպանություն ծրագրի սերվիսի ոչ թույլատրված, հեռակա կառավորումից, ինչպես նաև ծրագրի պարամետրերին հասանելության պաշտպանություն գաղտնաբառի միջոցով, որը թույլ կտա խուսափել պաշտպանության անջատումը չարամիտ ծրագրերի կողմից, ռեբրագործից կամ ոչ կվայիֆիկացված օգտատերից:
- Հնարավորություն տեղադրել միայն հակավիրուսային պաշտպանության ծրագրերի ընտրված բաղադրիչները:
- Սկավառակի ամբողջական կորավորումը, հատուկ սկավառակային գործակալի ստեղծմամբ եւ Single Sign On տեխնոլոգիայի հետ աջակցությամբ: Անհրաժեշտ է ունենալ գործիքներ գործակալի կամ OS ֆայլերի ձախողումների դեպքում կոդավորված տվյալների վերականգնում: Պետք է իրականացվի UEFI- համակարգերի օգտագործման հնարավորություն:
- Երկատիճան ատոմնտիֆիկացիայի ապահովում ամբողջական սկավառակի կորավորման ժամանակ:
- Ֆայլերի ճկուն կորավորում (ըստ գտնվելու վայրի, ըստ ֆայլի տիպի, ըստ ֆայլ ստեղծող ծրագրի): Ընտրված ծրագրերին կորավորված ֆայլերին հասանելիության սահմանափակելու մեխանիզմների առկայություն:
- Տվյալների գաղտնագրում շարժական կրիչների վրա, աշխատանքի ռեժիմի սահմանման հնարավորությամբ, որը թույլ է տալիս կորավորել կամ ապակորավորել ֆայլերը օրգանիզացիայի ցանցից դուրս:
- Վերոնշյալ բոլոր բաղադրիչների կենտրոնացված կառավարումը մեկ կառավարման համակարգով:

Պահանջներ, աշխատանքային կայանների եւ Linux ֆայլերի սերվերների հակավիրուսային պաշտպանության ծրագրային ապահովման համար:

Linux- ի աշխատանքային կայանների համար հակավիրուսային պաշտպանության ծրագրային ապահովումը պետք է գործածվի հետևյալ տարբերակների օպերացիոն համակարգերով աշխատող համակարգիչների վրա.

- Red Hat® Enterprise Linux® 6.7 x86/x64
- Red Hat® Enterprise Linux® 6.8 x86/x64
- Red Hat® Enterprise Linux® 7.2 x64
- Red Hat® Enterprise Linux® 7.3 x64
- CentOS-6.7 x86/x64
- CentOS-6.8 x86/x64
- CentOS-7.2 x64
- CentOS-7.3 x64
- SUSE® Linux Enterprise Desktop 12 x64
- openSUSE® 42.2 x64
- Debian GNU/Linux 7.10 x86/x64
- Debian GNU/Linux 7.11 x86/x64
- Debian GNU/Linux 8.6 x86/x64
- Debian GNU/Linux 8.7 x86/x64
- Ubuntu 10.04 LTS x86/x64
- Ubuntu 12.04 LTS x86/x64
- Ubuntu Server 14.04 LTS x86/x64
- Ubuntu Server 16.04 LTS x86/x64
- Ubuntu Server 16.10 LTS x86/x64
- OracleLinux 7.3 x64
- Debian GNU/Linux 7.10 x86/x64
- Debian GNU/Linux 7.11 x86/x64
- Debian GNU/Linux 8.6 x86/x64
- Debian GNU/Linux 8.7 x86/x64
- Ubuntu 10.04 LTS x86/x64
- Ubuntu 12.04 LTS x86/x64
- Ubuntu Server 14.04 LTS x86/x64
- Ubuntu Server 16.04 LTS x86/x64
- Ubuntu Server 16.10 LTS x86/x64
- OracleLinux 7.3 x64

Linux- ի աշխատանքային կայանների հակավիրուսային ծրագրերը պետք է ապահովեն հետևյալ ֆունկցիոնալությունը:

- Մշտական հակավիրուսային մոնիտորինգ.
- Ստուգում է SMB / NFS- ի կողմից անկա ռեսուրսները
- Heuristic անալիզատոր, որը թույլ է տալիս ավելի արդյունավետ հայտնաբերել և արգելափակել նախկինում հայտնի չարամիտ ծրագրերը:
- Հակավիրուսային սկանավորում օգտագործողի կամ ադմինիստրատորի իրամասններով և ժամանակացույցով:
- Արխիվների ֆայլերի հակավիրուսային սկանավորում և բուժում:
- Գործառույթները ակտիվացնել ժամանակացույցով և / կամ օպերացիոն համակարգի բեռնվածությունից անմիջապես հետո:
- Կարանտինի մեջ կասկածելի և վնասված օբյեկտների տեղադրեք:
- HTML- ի և CSV ձևաչափերով հաշվետվությունների արտահանման և պահպանման ունակություն:
- SAMBA- ի մակարդակով ֆայլերի գործողությունները խափանելու և ստուգելու ունակությունը:
- Համակարգչային ռեսուրսների օգտագործման ճկուն կառավարում, ֆայլի տարածման սկանավորում կատարելու ժամանակ հարմարավետ Օգտվողի փորձի ապահովում:
- Ամպային պաշտպանություն նոր սպառնալիքների դեմ, թույլ տալով, որ հասանելի կլինի արտադրողի կոնկրետ կայքերում, ստանալով դատավարություն սկսվող ծրագրի կամ ֆայլի մասին:
- Վնասված օբյեկտի պատճենը պահեստում պահպանում մինչև բուժում և հեռացում, օբյեկտի պահանջով վերականգնելու համար, եթե այն տեղեկատվական արժեք ունի:

- Օգտագործման հարմարավետ գրաֆիկական ինտերֆեյսի միջոցով կառավարելու ունակություն:
  - Բոլոր վերը նշված բաղադրիչների կենտրոնացված կառավարումը միասնական կառավարման համակարգով:
- Պահանջներ հակավիրուսային պաշտպանության ծրագրային ապահովման համար, ֆայլային սերվերների, ձեռնարկության մակարդակի սերվերների և տերմինալային սերվերների Windows- ի համար:
- Ձեռնարկությունների մակարդակի սերվերների և Windows տերմինալային սերվերների համար հակավիրուսային պաշտպանության ծրագրային ապահովումը պետք է գործածվի հետևյալ տարբերակների օպերացիոն համակարգերով աշխատող համակարգիչների վրա:
- Microsoft Windows Server 2008 Standard/Enterprise/DataCenter/Core SP1 արհեստ x86/x64;
  - Microsoft Windows Server 2008 R2 Core/ Standard/Enterprise/DataCenter SP1 արհեստ x64;
  - Microsoft Windows Server 2012 Core/Standard/Essential/DataCenter/Foundation x64;
  - Microsoft Windows Server 2012 R2 Core/Standard/Essential/DataCenter/Foundation x64;
  - Microsoft Windows Server 2016 Core/Standard/Datacenter/Essentials x64;
  - Microsoft Windows Storage Server 2008 R2 x64;
  - Microsoft Windows Storage Server 2008 R2 SP2 Standard/Workgroup x64;
  - Microsoft Windows Storage Server 2012 (всередакции) x64;
  - Microsoft Windows Storage Server 2012 R2 (всередакции) x64;
  - Microsoft Windows Storage Server 2016 x64;
  - Microsoft Windows Hyper-V Server 2008 R2 SP1 x64;
  - Microsoft Windows Hyper-V Server 2012 x64;
  - Microsoft Windows Hyper-V Server 2012 R2 x64;
  - Microsoft Windows Hyper-V Server 2016 x64.
- Տերմինալային սերվերներ:
- Microsoft Remote Desktop Services հաճառ Windows Server 2008;
  - Microsoft Remote Desktop Services հաճառ Windows Server 2012;
  - Microsoft Remote Desktop Services հաճառ Windows Server 2012 R2;
  - Microsoft Remote Desktop Services հաճառ Windows Server 2012;
  - Citrix XenApp 6.0/6.5/7.0/7.5 – 7.9;
  - Citrix XenDeskTop 7.0/7.1/7.5/7.9.
- Ձեռնարկությունների մակարդակի սերվերների և Windows տերմինալային սերվերների հակավիրուսային պաշտպանության ծրագրերը պետք է ապահովեն հետևյալ ֆունկցիոնալությունը:
- Տարբեր գործառույթներ իրականացնող սերվերներում հակավիրուսային սկանավորման իրականացում. Տերմինալային սերվերներ եւ տալիս սերվերներ; Դիմումի սերվերներ եւ տիրույթի կարգավարներ; Ֆայլի սերվերներ:
  - Սերվերի կաստերի պաշտպանության համար օգտագործման ունակությունը:
  - Ստուգելով պահպանվող սերվերի հետևյալ օբյեկտները, նրանց մոտք գործելու: Ֆայլեր, երբ դրանք գրվում են և կարդացվում են; Ֆայլերի համակարգերի այլընտրանքային հոսքեր (NTFS- հոսքեր); Տեղական կոշտ սկավառակների եւ շարժական սկավառակի ռեկորդ եւ բեռնվածություն:
  - Վիրուսային րոնկումների կանխարգելման միջոցով կանխարգելելով վիրուսային հարձակումների առաջացումը.
  - Վարակվածից հետո վերականգնումը, հեռացնելով բոլոր ֆայլերը, որոնք կապված են համակարգի ֆայլերից և OS ռեսուրսից ջնջված վնասակար օբյեկտի հետ, ինչը կանխարգելում է օպերացիոն համակարգում հնարավոր անսարքությունները.
  - Ամալային պաշտպանություն նոր սպառնալիքների դեմ, թույլ տալով, որ հասանելի կլինի արտադրողի կոնկրետ կայքերում, ստանալով դատավարություն սկսվող ծրագրի կամ ֆայլի մասին:
  - Կատարված ֆայլերի, սցենարների և MSI փաթեթների, ինչպես նաև DLL-մոդուլների և վարորդների գործարկման հսկողություն, որը թույլ չի տալիս չհավատարմագրված հայտերը կատարել: Մի սերվերի վրա ծրագրակազմի ընթացիկ փաթեթի վրա հիմնված ծրագրերը ավտոմատ կերպով ստեղծելու ունակություն է տալիս:
  - Microsoft- ի Windows Script Technologies- ի (կամ Active Scripting) վրա ստեղծված VBScript և JScript սցենարների կատարման փորձերի շարունակական մոնիտորինգ: Ստուգել սցենարների ծրագրի կողը և ավտոմատ կերպով արգելել այն անձանց կատարումը, որոնք վտանգավոր են ճանաչվում.
